

Բնապահպանության նախարարության բացատրությունները ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի կողմից 2018 թվականի մարտի 19-ի N7/10 որոշման՝ ՀՀ տարածքում ընդերքի օգտագործման տրամադրման օրինականության և ընդերքի օգտագործման /ոչ մետաղական հանքավայրեր/ նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների ընթացիկ հաշվետվության առաջարկություններ բաժնի բնապահպանության նախարարության պարբերության վերաբերյալ

Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման ենթակա գումարներն ընդերքօգտագործողները սկսել են վճարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N1128-Ն որոշումն ընդունվելուց հետո (Որոշումը ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N1079-Ն որոշմամբ): Մինչ այդ, դեռևս խորհրդային ժամանակներում նաև, փակված, դադարեցված, լքված, տիրազուրկ հանքավայրերի խախտված հողերի վերականգնման համար շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումներ չեն իրականացվել, խախտված հողատարածքները հիմնականում չեն վերականգնվել, քանի որ բացակայել են այդ աշխատանքները կարգավորող իրավական ակտերը և կանոնակարգերը:

Բնապահպանության նախարարությունը շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի վճարների տվյալների վերլուծության արդյունքում պարզել է, որ ընդերքօգտագործողների կողմից պատշաճ չեն իրականացվում ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N1079-Ն որոշման պահանջները՝ ժամանակին չեն վճարվում վերը նշված վճարները, քանի որ առկա են վերաձևակերպված և նոր կնքված ընդերքօգտագործման պայմանագրեր, որտեղ բացակայում են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի գումարները և դրանց վճարման սահմանված ժամանակացույցը:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման, հատկացումների չափերի հաշվարկման, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ որոշումների ընդունման իրավասությունները վերապահված են ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին՝ բնապահպանության նախարարությանը, իսկ նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն ընդերքօգտագործման պայմանագրերի կնքման, ընդերքօգտագործման իրավունքների դադարեցման և հրաժարման հավաստագրերի տրամադրման իրավասությունները վերապահված են ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառի լիազոր մարմնին՝ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը:

Բնապահպանության նախարարությունն իր իրավասությունների սահմաններում ընդերքօգտագործման իրավունքների դադարեցված և հրաժարման հավաստագիր ստացած կազմակերպությունների վերաբերյալ նախարարությունում առկա տվյալների ուսումնասիրության արդյունքում՝ 2014 թվականի նոյեմբերի 18-ի N1/02.1/12496, 2015 թվականի հուլիսի 7-ի N1/02.1/11451, սեպտեմբերի 18-ի N1/02.1/12018, 2016 թվականի փետրվարի 3-ի N1/02.1/10160 և ապրիլի 18-ի

N1/02.1/0732 գրություններով դիմել է էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը՝ խնդրելով տրամադրել հրաժարման հավաստագրերի և ընդերքօգտագործման իրավունքների դադարեցման հիմքերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն, քանի որ առկա են ընդերքօգտագործողներ, որոնք վերը նշված վճարները չեն իրականացրել կամ իրականացրել են մասամբ, և խնդրել է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ սահմանված կարգով ապահովել չվճարված գումարների գանձումը: Ինչպես նաև, համաձայն ՀՀ վարչապետի 2016 թվականի մարտի 16-ի N02/24.12/3603 հանձնարարականի բնապահպանության նախարարությունը յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանն է ներկայացրել այն ընդերքօգտագործողների ցանկը, որոնք չեն վճարել կամ մասամբ են վճարել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի գումարները:

ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի նիստով ընդունվել է «13. ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ՖՈՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿՈՒՎՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» N46 արձանագրային որոշումը: 2018 թվականի հունիսի 1-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 626-L որոշումը:

ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒՎՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N275-Ն որոշման 1-ին մասի 1)-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի՝ N1 հավելվածի 42-րդ կետի միջոցառման կատարումն ապահովելու նպատակով մշակվելու է «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որի ընդունման արդյունքում նախատեսվում է ամրագրել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի ձևավորման և կուտակվող գումարների արդյունավետ և նպատակային օգտագործման նոր մեխանիզմներ, կկանոնակարգվեն մի շարք օրենսդրական բացեր, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ և նպատակային օգտագործել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխում կուտակվող գումարները: